Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/28099/02/23
2024թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«28» փետրվարի 2024թ. ք. Երևան

Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գ. Հակոբյանս, ուսումնասիրելով թիվ ԵԴ2/28099/02/23 քաղաքացիական գործով ըստ Սոնա Ալեքսանյանի հայցի ընդդեմ Կարեն Մանուկյանի՝ ալիմենտ բռնագանձելու և երեխաների բնակության վայրը որոշելու պահանջների մասին, Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ե. Առաքելյանի կողմից 19.02.2024 թվականին կայացված «Գործը ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին» որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Սոնա Ալեքսանյանը հայց է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ Կարեն Մանուկյանի՝ ալիմենտ բռնագանձելու և երեխաների բնակության վայրը որոշելու պահանջների մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 12.09.2023 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Հովհաննիսյանը, պատճառաբանելով, որ՝

- «*օրենսդրի կողմից ալիմենտ բռնագանձելու պահանջի քննության տարածքային ընդդատության որոշման հարցը հայցվորին վերապահելն ինքնանպատակ չէ, քանի որ այն ուղղված է երեխայի լավագույն շահի ապահովմանը: Ընդ որում, դրա նպատակն է այն է, որ հայցվորը, որի մոտ գտնվում է երեխան, ունենա առավել հարմարություն դատարան ներկայանալու համար՝ պայմանավորված դատարանների գտնվելու վայրերի հնարավոր հեռավորությամբ*»,

- «*գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ դիրքորոշում հայտնելը պատասխանողին վերապահելը վերաբերում է բացառապես այն դեպքերին, երբ տվյալ հայցը ներկայացվել է ընդհանուր կանոնով պայմանավորված: Այսինքն՝ այն դեպքերում, երբ հայցը պարտադիր կերպով ենթակա չէ ներկայացման ընդհանուր կանոնով, ապա այդ դեպքում տարածքային ընդդատության հարցի որոշումը թողնված չէ պատասխանողին: Դատարանի նման համոզմունքը պայմանավորված է նրանով, որ հենց ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն է իրավունք վերապահում հայցվորին իր ընտրությամբ դիմել համապատասխան տարածքային ընդդատությամբ դատարան: Այսինքն՝ Դատարանի գնահատմամբ նման դեպքերում էական նշանակությունն ունի բացառապես հայցվորի կամքը*»,

- «*25.01.2024 թվականին, ժամը 10:30-ին նշանակված դատական նիստում հայցվորը հայտնեց, որ փաստացի բնակվում է ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Գ. Լուսավորիչ փողոցի թիվ 43 տանը: Հայտնեց նաև, որ երեխաները նույնպես բնակվում են նույն տանը, որտեղից էլ հաճախում են դպրոց*»,

- «*սույն դեպքում հայցվորի կամքն արտահայտված է նրանում, որ հայցը ներկայացվեր և քննվեր ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում: Միաժամանակ Դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում առկա է նաև հայցվորի ընտրությամբ ըստ տարածքային ընդդատության դիմելու դեպք, այն է՝ ներկայացվել է նաև ալիմենտ բռնագանձելու պահանջ: Հետևաբար սույն քաղաքացիական գործի քննությունը պետք է հանձնել ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը*»,

25.01.2024 թվականին որոշում է կայացրել գործը Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը հանձնելու մասին:

Գործը 08.02.2024 թվականին ստացվել է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում և բաշխվել նույն դատարանի դատավոր Ե. Առաքելյանին:

Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ե. Առաքելյանը, համաձայն չլինելով գործի տարածքային ընդդատությանը, 19.02.2024 թվականին որոշում է կայացրել թիվ ԵԴ2/28099/02/23 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին, այն պատճառաբանությամբ, որ՝

- «*Սոնա Յոլակի Ալեքսանյանի կողմից Կարեն Ենոքի Մանուկյանի դեմ հայց հարուցելու պահին վերջինս հայցադիմումում նշված հասցեում հաշվառված չի եղել, քանի որ հայցադիմումը ներկայացվել է 28.08.2023թ., երբ պատասխանող Կարեն Ենոքի*

Մանուկյանը գտնվել է «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում, հետևաբար, թիվ ԵԴ2/28099/02/23 քաղաքացիական գործը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի կողմից վարույթ է ընդունվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ (Քաղաքացիական գործերի ընդհանուր տարածքային ընդդատությունը) հոդվածով սահմանված ընդդատության կանոնի խախտմամբ»,

- «Վերը նշվածից բխում է, որ սույն գործն այլ դատարանի քննությանը հանձնելու հարցը լուծելիս ենթակա է կիրառման ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 4-րդ մասը, հետևաբար, գործը կարող էր հանձնվել այլ դատարանի քննության միայն այն դեպքում, եթե պատասխանող Կարեն Ենոքի Մանուկյանը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը առարկեր գործը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննելու վերաբերյալ: Մինչդեռ, գործի նյութերում առկա չէ գործը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննելու վերաբերյալ պատասխանող Կարեն Մանուկյանի կողմից ներկայացված առարկություն:

Նման պայմաններում Դատարանը գտնում է, որ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը թիվ ԵԴ2/28099/02/23 քաղաքացիական գործով չի կարող համարվել իրավասու դատարան և իրականացնել գործի ըստ էության քննություն»,

- «այլընտրանքային տարածքային ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործը մեկ դատարանից այլ դատարան հանձնելը ևս իրականացվում է պատասխանողի հայեցողությամբ: Ընդ որում, Դատարանի գնահատմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածով հայցվորին վերապահված արտոնությունը գործում է բացառապես հայցի հարուցման փուլում, իսկ քննարկվող դեպքում հայցվոր Սոնա Ալեքսանյանը, օգտվելով իր հայեցողական իրավունքից, ալիմենտ բռնագանձելու պահանջ պարունակող հայցադիմումը ներկայացրել է ընդհանուր տարածքային ընդդատության դատարան»:

Թիվ ԵԴ2/28099/02/23 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 22.02.2024 թվականին:

Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գ. Հակոբյանս, լուծելով թիվ ԵԴ2/28099/02/23 քաղաքացիական գործի տարածքային ընդդատության մասին վեճը, գտնում եմ, որ նշված քաղաքացիական գործով իրավասու դատարանը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանն է հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ տարածքային ընդդատության կամ սնանկության դատարանից ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի

նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահը գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընտանեկան վեճեր քննելիս գործի քննությունն իրականացվում է նույն օրենսգրքով նախատեսված կանոնների պահպանմամբ՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով և նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված առանձնահատկությունները:

Նկատի ունենալով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդվածով գործերի ընդդատության վերաբերյալ առանձնահատկություններ սահմանված չեն, ուստի թիվ ԵԴ2/28099/02/23 քաղաքացիական գործի ընդդատությունը ենթակա որոշման նույն օրենսգրքով նախատեսված ընդհանուր կանոնների պահպանմամբ:

Այսպես՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան, եթե այլ բան սահմանված չէ նույն օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ալիմենտ բռնագանձելու կամ հայրությունը որոշելու վերաբերյալ հայցը կարող է ներկայացվել հայցվորի հաշվառման կամ բնակության վայրի առաջին ատյանի դատարան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը տարածքային ընդդատության կանոնների պահպանմամբ իր վարույթ ընդունած գործը պետք է քննի ըստ էության, թեկուզև այն հետագայում դարձել է ընդդատյա այլ դատարանի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը գործը հանձնում է այլ դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել նույն օրենսգրքի 24-րդ կամ 138-րդ հոդվածով սահմանված կանոնների խախտմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին կայացվում է որոշում:

Վերը նշված նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չլինելու դեպքում, հայցը որպես կանոն ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան:

Միևնույն ժամանակ օրենսդիրը վերը նշված ընդհանուր կանոնից սահմանել է բացառություն՝ հայցվորին հնարավորություն տալով՝ պայմանավորված որոշակի սուբյեկտների կազմով և հայցատեսակներով, քաղաքացիական գործի տարածքային ընդդատությունը որոշելու իր ընտրությամբ: Նման հայցատեսակ է, օրինակ, ալիմենտ բռնագանձելու վերաբերյալ հայցը, որի դեպքում հայցվորին իրավունք է վերապահված ընտրություն կատարելու հայցը հարուցել կա՛մ պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի առաջին ատյանի դատարան՝ ընդհանուր կանոնի համաձայն, կա՛մ իր հաշվառման կամ բնակության վայրի առաջին ատյանի դատարան: Ընդ որում, վերը նշված իրավակարգավորումների էությունից բխում է, որ հայցվորն այդ ընտրության հնարավորությունից կարող է օգտվել բացառապես հայց ներկայացնելու պահին, որպիսի եզրահանգումը բխում է ինչպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածում օգտագործված «***հայցը կարող է ներկայացվել***» ձևակերպումից, գործի քննությունը ողջամիտ ժամկետում իրականացնելու անհրաժեշտությունից, այնպես էլ դատավարական իրավունքների չարաշահման անթույլատրելիության սկզբունքից, որը հայցվորին թույլ չի տալիս չարաշահելու իր դատավարական իրավունքները, տվյալ դեպքում՝ գործի քննության ընթացքում փոփոխելու իր դիրքորոշումը՝ կապված քաղաքացիական գործի տարածքային ընդդատությունն ընտրելու հետ:

Օրենսդիրը համապատասխան իրավակարգավորումներ է նախատեսել նաև գործը մեկ դատարանից մեկ այլ դատարան հանձնելու վերաբերյալ՝ սահմանելով, որ դատարանը տարածքային ընդդատության կանոնների պահպանմամբ իր վարույթ ընդունած գործը պետք է քննի ըստ էության, թեկուզև այն հետագայում դարձել է ընդդատյա այլ դատարանի: Նշված կանոնից բացառություն են կազմում միայն այն դեպքերը, երբ գործը քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել բացառիկ տարածքային ընդդատության կամ նույն օրենսգրքի 138-րդ հոդվածով սահմանված կանոնների խախտմամբ:

Սույն գործում առկա փաստերի վերլուծությունից բխում է, որ թիվ ԵԴ2/28099/02/23 քաղաքացիական գործն ընտանեկան վեճի վերաբերյալ է՝ կապված ալիմենտ բռնագանձելու և երեխաների բնակության վայրը որոշելու հետ, որի պայմաններում սույն գործով հայցը հայցվորի ընտրությամբ կարող էր ներկայացվել կա՛մ իր, կա՛մ պատասխանողի հաշվառման կամ բնակության վայրի առաջին ատյանի դատարան: Տվյալ դեպքում հայցը ներկայացնելու օրվա՝ 28.08.2023 թվականի դրությամբ հայցվորը հաշվառված է եղել Երևանի Ն. Շենգավիթ 3-րդ փողոցի թիվ 40 տանը (հիմք՝ հայցադիմումումը), իսկ պատասխանող Կարեն Մանուկյանը գտնվել է Արդարադատության

նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում, որտեղից ազատվել է 19.09.2023 թվականին (հիմք՝ գ. թ. 45, 47):

Այսինքն՝ տվյալ դեպքում հայցը հայցվորի ընտրությամբ ներկայացվել է իր հաշվառման վայրի առաջին ատյանի դատարան՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան, որի պայմաններում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը տարածքային ընդդատության կանոնների պահպանմամբ իր վարույթ ընդունած գործը պետք է քններ ըստ էության, թեկուզև այն հետագայում ընդդատյա դառնար այլ դատարանի, տվյալ դեպքում՝ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (*սույն դեպքում բացակայում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասում նշված բացառությունները*):

Վկայակոչված իրավական նորմերի և դրանց վերաբերյալ վերլուծությունների արդյունքում գտնում եմ, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Հովհաննիսյանի կողմից 25.01.2024 թվականին կայացված որոշման մեջ նշված պատճառաբանությունները չէին կարող բավարար հիմք հանդիսանալ տարածքային ընդդատության կանոնների պահպանմամբ իր վարույթ ընդունած գործն այլ դատարանի քննությանը հանձնելու համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ թիվ ԵԴ2/28099/02/23 քաղաքացիական գործով իրավասու դատարան է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, որի պայմաններում գործն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ ԵԴ2/28099/02/23 քաղաքացիական գործն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

2. Սույն որոշումը և թիվ ԵԴ2/28099/02/23 քաղաքացիական գործի նյութերն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան:

3. Որոշման օրինակն ուղարկել Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Վճռաբեկ դատարանի
քաղաքացիական պալատի նախագահ **ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ**